

կուսակցութեան կողմանէ, իբր թէ կտակաւ Վասիլ կայսեր թողուցած ըլլայ իւր գաւառները. կտակ մը՝ որուն շատ կը նմանի Անույ մասին ալ պատրուակուած չարաշուք կտակը: Արդիւնքը միայն այն եղաւ որ քիչ մ'ետքը սկսած Սելջուկեան հեղեղն այլ եւս անարգել ողողեց ու կործանեց ի՛չ միայն Հայաստանն ու Տայք. այլ գրիթէ անմիջապէս նաեւ Բիւզանդեան կայսրութեան ամենամեծ մասը՝ ամբողջ Փոքր-Ասիան նուաձեց: Բայց այլ եւս Վրական Բագրատունիք¹ յաջողեցան միացընելով Ափսաղաց ու Վրաց գահերը՝ վերակազմել Վրաստանը, ձեռք բերել կրկին Տայոց գոնէ մէկ մասը, մայրաքաղաք ընել Տփղիս, եւ ի վերջոյ գրաւել նաեւ Անույ իշխանութեան գոնէ մաս մը: Յորչափ համերաշխ էին բազմազան ցեղերը եւ նաեւ Հայք, որոնց յոյսը՝ Անույ անկմանէն ետքը, միայն

¹ Բագրատունեաց մասին նորագոյն երկը՝ Josef Marquart, Osteuropäische und ostasiatische Streifzüge. Leipzig 1903, p. 391—465. Հեղինակէն զատ ընդարձակուած եւ սրբագրուած՝ «Բագրատունեաց ծագումը: Ա. Հայ Բագրատունեաց ճիւղագրութիւնը: Բ. Վրական Բագրատունեաց ծագումը», Թրգմ. Հ. Մեդրոյ Վ. Հոգրէն: Վիեննա 1913. Ազգ. Մտնդր. ՀԿ.: Տարօնի Բագրատունեաց մասին ընդ մամուլ գործը տակաւին լոյս չէ տեսած: